ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/35/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կազմակերպված՝
գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 23.11.2018թ. ժամը 14.15

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյանը
Անդամներ՝ Ս. Քոչարյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 19.11.2018թ. հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/35/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած «Միկրորինգ» ՍՊԸ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Գնահատող հանձնաժողովի 16.11.2018թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակից Էյչ Գրուպ ՍՊԸ–ից eauction.armeps.am համակարգով էլեկտրոնային եղանակով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած Էյչ Գրուպ ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով նշված փաստաթղթերը Էյչ Գրուպ ՍՊԸ–ն eauction.armeps.am համակարգով սահմանված ժամկետում ներկայացվել է Կարգի 61-րդ կետի 2-րդ և Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված փաստաթղթերը:

3. Հանձնաժողովը որոշեց.

3,1_Էյչ Գրուպ ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար և 1 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել Էյչ Գրուպ ՍՊ ընկերությունը

Ընդունվել է որոշում. կողմ՝ 2, դեմ՝ 0

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/

Ընդունվել է որոշում. կողմ՝ 2, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ս. Դավթյան

անդամներ՝ _____ Ս. Քոչարյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան